ԿՈՂԲ

Պատմագրության մեջ կոչվել է Կողբաքար: Այս անունով՝ Կողբափոր, կոչվել է նաև գավառը: Կողբը եղել է գավառի վարչական կենտրոնը:

Գյուղի մեջ եղել է զույգ ավանդատնով IV դարի մի եկեղեցի,[104] որի միայն ավերակներն են մնացել: Մասնագետների վկայությամբ եկեղեցին զարդարված է եղել քանդակներով:[105]

Մի եկեղեցու ավերակ էլ՝ Ս. Աստվածածին անունով, գտնվում է գյուղի գերեզմանոցում:

Երրորդ հուշարձանը Ագեղցի կոչվող գյուղատեղում է, մոտ 2 կմ Կողբից հարավ: Այն եռանավ սրահ է, խիստ ավերակ վիճակում:

Շրջանի առավել նշանավոր հուշարձանը գտնվում է Կողբից 3 կմ հարավ-արևմուտք, անտառի մեջ, շուրջը տարածված են հին բնակավայրի ավերակներ: Դա եռանավ բազիլիկա է՝ շարված կոպտատաշ քարով: Համեմատաբար լավ է պահպանված արևելյան պատը, մնացածները՝ 3 մ բարձրությամբ: Թաղը լրիվ թափված է ներսում: Ամայացած գյուղն ու եկեղեցին կրում են Տվարագեղցի անունը: Կրկնարմատ բառս կազմված է *տավար* (անասուն) *և ագեղցի* (եղցի, եկեղեցի) բառերից, որը տարածված է Հյուսիսային Հայաստանում (Թումանյանի, Իջևանի, Տավուշի շրջաններ): Բառաբարդությունը հանգամանորեն քննարկված է բանասեր-վիմագրագետ Ս. Ավագյանի կողմից (ՎԱԲ, 159):

Հարավակողմից եկեղեցին ունի մեկ ավանդատուն: Արտաքուստ արևելյան խորանը ուղղանկյունաձև է: Ճարտարապետական հիշյալ տվյալներով այս եկեղեցին կարող է թվագրվել միայն IV դարով: Գ. Շախկյանն ընդգծում է, որ «Տվարագեղցի եկեղեցին Լոռվա տարածքի» առայժմ հայտնի վաղմիջնադարյան միակ եռանավ դահլիճն է:[106]

ՏՎԱՐԱԳԵՂՑԻ

1129. ՏՎԱՐԱԳԵՂՑԻ. եկեղեցու արևելյան պատուհանի կողքին, ագուցված քարի վրա, 3 տող.



ՍԱՄ[ՈՒ]ԵԼ ԳՐ-
ԵՑ. ՅԱՂՈԹՍ
ՅԻՇԵՔ:

Հրատ. Շախկյան, Լոռի, 161: Ավագյան, ՎՊ, 156:

Ծանոթ. Արձանագրության քարը գույնով և տաշվածքով տարբերվում է եկեղեցու պատերի քարերից: Նույնանման այլ քարեր ևս կան՝ պատված պատկերաքանդակներով և զարդաքանդակներով: Ուշադրություն են գրավում հավասարաթև խաչերը, որոնք, անտարակույս, վաղ միջնադարյան են, մանավանդ կլոր շրջանակի մեջ առնվածը արձանագրված քարի վրա:

---

[104] *Գ. Շախկյան,* Վաղ միջնադարյան երկու հուշարձան Կողբում, ՊԲՀ, 1979, 4, 264-267:
[105] *Հ. Եղիազարյան,* Կողբ գյուղի հնագույն տաճարի պեղումները, «Էջմիածին», 1963, 9., 50-57:
[106] *Գ. Շախկյան,* Լոռի, 161:

Դատելով արձանագրությունը կրող քարից և տառաձևերից, այն պետք է VI-VII դդ. պատկանի, իսկ ՍԱՄԵԼԸ ոչ միայն գրիչն է, այլև եկեղեցու ճարտարապետ-շինարարը (ավելի ստույգ՝ վերականգնողը), թեև փորձեր են արվել նրան նույնացնելու XIII դ. նույն միջավայրում խաչքարեր կազմող վարպետի հետ, Տեր-Ավագի գործընկերոջը:

1130. Նույն տեղում, 1 տող.

Ի թվականս Հայոց :Զ:Է (1458):

Ծանոթ. Գրված է Սամելի հիշատակագրից ձախ, բոլորովին այլ տառատեսակներով, կապ չունի նախորդի հետ և վերաբերում է ուշ շրջաններում կատարված վերանորոգություններին:

Թվի հարյուրավորի պատկերը հստակ չի գծագրված: Գ. Շախկյանն այն կարդացել է Չէ-1258, նույնացրել երկու արձանագրությունները և «ոմն Սամվելին» համարել այդ թվին եկեղեցին նորոգողը (Լոռի, 161): Բայց այս երկու վիմագրերը տարաժամանակյա են:

1131. ԽԱՉՔԱՐ. Սլացիկ, գեղաքանդակ, շքեղ, Հաղբատի եռախորան խաչքարերի նմանությամբ, «Տվարագեղցուց» ոչ հեռու, անտառում, կանգնած պատվանդանի վրա, ներքին եզրում (կես մասը քերված), 8 տող.



ԲԱՐԵՊԱՇՏԻ
ԱԶԱՏԻ, ԻՇԽ[Ա
ՆԱ]...ԱԻ ՍԱԳՍԻ ԵՒ ՄԻԱԲ.
ԱՆԵՑԻՔ ՔԱՒԱՐԱՆՍ...
..ԱՔ [ՍԲ ՏԵՐ]ՈՒՆԱԿԱ[Ն]...
ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՉԻ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՆՆՋԵՑ-
ԵԼՈՑ ԿԱՏԱՐԻ, ՈՐ ԽԱՓԱՆԵ՝ ՍԱՏԱՆԱԻ Գ-
ՈՐԾԱԿԻՑ Է:

Ծանոթ. Ընթերցվում է դժվարությամբ, սակայն պարզվում է, որ բարեպաշտ Ազատը Սարգիս իշխանի ժամանակ հասարակաց ննջեցյալների հիշատակին պատարագ է մատուցել:

1132. ԽԱՉՔԱՐ. «Տվարագեղցուց» հյուսիս, Կողբից 2 կմ արևմուտք, պատմական գերեզմանոցում ընկած, գեղաքանդակ, 5 տող.

ԵՍ՝ ՔԵՐՈԲՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵ-
ԽԱՒՍՈՒԹԻ[ԻՆ] ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՅՈՒՆԱՆԱ
ԵՒ ՄԽԻԹԱՐԱ, ԶԻ ԿԻՍԱՒՐԵ ՎԱՂՁԱՆԵ-
ՑԱՆ, ԶԾՆՈՂՔՍ ԶՔԵՐՈԲ ԵՒ ԶԱՒԱԳՏԻԿԻՆ
ՅԻՇԵՑ[ԷՔ]:

Հրատ. Ավագյան, ՎՊ, 157 (քաղել է ՀՊՎԱ-ից «որոշ վերապահությամբ» համարում է, Սամուելի ծեռակերտը):

1133. ԽԱՉՔԱՐ. Նույն գերեզմանոցում, ձախ կողը ջարդած, քիվին 1 տող կիսաեղծ և մակերեսին.



[ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ] . . . ՍԱՐԳՍԻՆ, ՄԻԿՐԻՆ:

Ռ ԹՎ[ԻՆ] ՃԷ (1658):

Ծանոթ. Թվատառերի հետուառաջ գցելը անսովոր չէ վիմագրերում: Խաչքարը տեղագրական-ժամանակագրական և հորինվածքային առումով վերագրելի է Խաչատուր կազմողին:

1134. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Խաչքարի մոտ, տափակ, 2 տող.



ՅԱՅ[Ս]Է ՀԱՆԳ[ԻՍ]ՏՆ Ք[Ա]Հ[ԱՆԱ]Ի
ՍԱՐԳԻՍԱ:

Ծանոթ. Այս գերեզմանոցում շատ են տարածև տապանաքարերն ու խաչքարերը, կան նաև քառակող կոթողների առանձին հատվածներ խաղողորթերի և մարդկանց պատկերներով:

Քահանայի անունը փակագրված է՝ վերծանությունն անվստահելի: Դրանցում կարելի է ակնկալել *ԱՐԳԱՄ, ՄԱՐԳԱՐ* անունները, բայց եթե իսկապես խաչքարի վրա հանդես եկողն է, ապա հավանական է թվում և *Սարգիս* վերծանումը:

1135. ԽԱՉՔԱՐ. ընկած Ագեցի գյուղատեղի կիսավեր մատուռի կողքին, Մուխանց ջրաղացի մոտ, թիկունքին կնոջ և երեխայի խորաքանդակ, որոնց շուրջը 17 տող.



Ի :Ո: եւ Ի:Խ:(1191) թվականի[ն] Հ[ա]յոց[]
յանուն Աց եմ՝ Վարդաշատայ, կանգնեցի զ-
խաչս ի վերա Հանգըստարանի կենակցի իմ-
ոց անիոփայի, զի կեսաւրո փոխեցաւ յաշխ-
արհե եւ եթող զիս սգալի
կեանաւք, եւ ապա նախ-
աժամայն կանգնեցի
զերրորդ
խաչերս
ծնողաց եւ
եւ եղբ-
արց իմոց:
Ի Քս յիշ-
եցեք զ-
ամենեսեան:
սամու-
եւ կա-
զմ[ող]:

Հրատ. Ավագյան, ՎՊ, 156 (առաջին 7 և վերջին 3 տողերը). Շահինյան, ՄՀԿՀ, 41:

Ծանոթ. Ավագյանը և Շահինյանը ննջեցյալի անունը կարդացել են Անիփա՝ թեև Փ-ն փորագրված է Ո-ի աջ ստեղնի վրա:

ՋՈՒԽՏԱԳԵՂՑԻ (զույգ եկեղեցի)

1136. ՋՈՒԽՏԱԳԵՂՑԻ. առաջին մատուռի հյուսիսային պատին, վերևում, 3 տող.



[թվին] ՈՒ (1171): Մեք՝ Մեղուցե[ա]լ ծառայ Քս[ի]
դեղս եւ ամուսին իմ Փուրթ[ուխ]-
ան, տիաք զմեր հոգոյն
պահու[ստն]:

Ծանոթ. Թվատառերի միավորն իսպառ ջնջված է, որն էական փոփոխություն չի բերում: Թիվն առհասարակ երկմտելի է: Այս և հաջորդ չորս արձանագրությունների գրչագրերը վերցված են Լ. Բարսեղյանի հավաքածուից: